



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԴԱՍ 3



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Չեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:



ԴԱՍ 3

ԱՆՉԱՓԱՐԱՍՆԵՐԻՆ ՊԱՏԺՑ ԱՋԱՏԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով
ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն
այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱԳՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է
մոտ 5 րոպե:



Ուշադրությամբ
կարդացեք դասի
տեսական մասը՝
օգտվելով բառարանից,
և այն յուրացնելուց հետո
միայն պատասխանեք
ինքնաստուգիչ
հարցերին:
Այս աշխատանքների
համար անհրաժեշտ է
մոտ 210 րոպե:



գործող քրեական օրենսգիրքը նախատեսում է հանցանք կատարած անձին պատժից ազատելու այնպիսի հիմքեր, ինչպիսիք են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելը, հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը, պատժից ազատելը ծանր հիվանդության հետևանքով, պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետևանքով, պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով, ներումը և համաներումը: Թեև ՀՀ գործող քրեական օրենսգիրքը (1) պատիժը պայմանականորեն չկիրառելը չի նախատեսել պատժից ազատելու տեսակների շարքում, սակայն այն ևս, փաստացի, հանդիսանում է պատժից ազատելու տարատեսակ, ինչն իր արտացոլումն է գտել նաև 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում (2):

Պատժից ազատելու նշված հիմքերը կիրառելի են ինչպես չափահասների, այնպես էլ անչափահաս-

ների նկատմամբ: Այնուհանդերձ, քրեական օրենսդրությանը նախատեսված են նաև հատուկ կարգավորումներ, որոնք սահմանում են անչափահասներին պատժից ազատելու առանձնահատկությունները:

Մասնավորապես՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածն առանձնահատուկ կանոններ է սահմանում անչափահասներին դատավճռի կատարման վաղեմության ժամկետն անցնելու հիմքով պատժից ազատելիս, սահմանելով, որ օրենքով սահմանված այդ ժամկետները, որոնք ենթադրաբար պետք է կիրառվեն չափահասների պարագայում, անչափահասների պարագայում կրճատվում են կիսով չափ: Արդյունքում՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածի համաձայն՝ մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձը դատավճռի կատարման վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով ազատվում է պատժից, եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական դատավճիռն ի կատար չի անվել հետևյալ ժամկետներում՝

- 1 մեկ տարի՝ ոչ մեծ ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում,
- 2 երկուսուկես տարի՝ միջին ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում,
- 3 հինգ տարի՝ ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում,
- 4 յոթ և կես տարի՝ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում:

2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում, սակայն, մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով անչափահասներին պատժից ազատելու առանձնահատուկ կարգավորում առկա չէ, փոխարենը թե՛ չափահասների, թե՛ անչափահասների նկատմամբ կիրառվում է այն դրույթը, համաձայն որի՝

«1. Հանցագործության համար դատապարտված անձը դատարանի որոշմամբ ազատվում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց,



Եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական դատավճիռն ի կատար չի անվել դատավճռով նշանակված պատժի ժամկետին հավասար ժամանակահատվածում:

2. Ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված անձը դատարանի որոշմամբ ազատվում է պատիժը կրելուց, եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական դատավճիռն ի կատար չի անվել 1 տարվա ընթացքում»:

Անչափահասներին պատժից ազատելու առանձնահատկություններն առավել հաճախ քննարկվում են անչափահասին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու կիրառման հետ կապված: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածի համաձայն՝ անչափահաս տարիքում հանցանք կատարած և ազատագրվման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

- 1 ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը.
- 2 ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը.
- 3 առանձնապես ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը:

Պետք է նշել, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքին անչափահասների համար նախատեսում է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար պատժի պարտադիր կրման ավելի կարճ ժամկետներ, քան չափահասների համար: Այս տեսակետից ՀՀ քրեական օրենսգրքը համապատասխանում է Պեկինյան կանոններին (3), որի 28-րդ կանոնի համաձայն՝ քրեկատարողական հիմնարկից պայմանական ազատումը համապատասխան մարմնի կողմից պետք է կիրառվի հնարավորին լայնորեն և հնարավորին վաղ փուլում:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ներկայիս կարգավորումը որոշակի խնդիրներ է ստեղծում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման համար այն իրավիճակներում, երբ անձը պատիժ է կրում մի քանի հանցանքների կատարման համար, որոնց մի մասը նա կատարել է անչափահաս, մյուսները՝ չափահաս տարիքում: Նման դեպքերում

խնդիր է ծագում, թե պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը կիրառելիս՝ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ նշանակված միասնական պատժաչափի պարագայում, ազատման համար անհրաժեշտ պատժի նվազագույն ժամկետը հաշվարկելիս որ չափանիշով ղեկավարվել՝ չափահասների, թե՛ անչափահասների համար նախատեսվածով: Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար անհրաժեշտ պատժի նվազագույն ժամկետը հաշվարկելու չափանիշի կիրառման առումով խնդիրներ են ծագում նաև այն դեպքում, երբ անչափահասը դատապարտվել է հանրային վտանգավորության տարբեր աստիճաններ ունեցող հանցանքների կատարման համար (օրինակ՝ ոչ մեծ ծանրության և առանձնապես ծանր): Անհասկանալի է, թե այդ դեպքում հաշվարկային որ միավորը պետք է կիրառվի՝ ոչ մեծ ծանրությամբ, թե՛ առանձնապես ծանր հանցագործության համար նախատեսվածը: Բարձրացված հարցերի պատասխանը գործող քրեական օրենսդրությունը չի տալիս:

2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքն անչափահասին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորությունը կապում է ոչ թե հանցագործության ծանրության, այլ նրա նկատմամբ նշանակված պատժի չափի հետ: Մասնավորապես, օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝

«Մինչև 21 տարին լրանալը հանցանք կատարած և ազատագրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

- 1) 3 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատագրկման ոչ պակաս, քան մեկ քառորդը,
- 2) 5 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատագրկման ոչ պակաս, քան մեկ երրորդը,
- 3) 10 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատագրկման ոչ պակաս, քան մեկ երկրորդը,
- 4) 10 տարուց ավելի ժամկետով նշանակված ազատագրկման ոչ պակաս, քան երկու երրորդը»:

Ուշադրություն դարձրեք պայմանական վաղաժամկետ ազատման համար փաստացի կրած ժամկետների վրա

Այս մոտեցումն առավել հաջողված է. պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար պատժի պարտադիր ժամկետը, որը կրելուց հետո միայն դատապարտյալը կարող է ազատվել պատժի հետագա կրումից, պետք է կախված լինի ոչ թե հանցագործության տեսակից, այլ դատարանի կողմից նշանակված պատժից: Միայն դատարանի կողմից նշանակված պատիժն է, որն անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանի իրական ցուցանիշն է: Անձը կարող է կատարել արարք, որը ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված չափանիշներով ծանր հանցագործություն է, սակայն դատարանը, հաշվի առնելով գործում առկա մեղմացնող հանգամանքները, հանցագործության մեջ անձի ունեցած երկրորդական դերը (հանցակցությանը հանցանքը կատարելու դեպքերում) և այլն, նշանակի շատ մեղմ պատիժ: Ուստի, առավել հիմնավոր է թվում, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար պատժի պարտադիր ժամկետը, որը կրելուց հետո միայն դատապարտյալը կարող է ազատվել պատժի հետագա կրումից, պայմանավորված լինի դատարանի կողմից նշանակված պատժով: Հարցի նման լուծումը հնարավորություն է տալիս կանոնակարգել նաև այն դեպքերը, երբ պատիժ է նշանակվել հանցագործությունների կամ դատավճիռների համակցությանը, կամ կիրառվել է օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ:

ՀՀ նոր քրեական օրենսգիրքը կանոնակարգում է նաև այն դեպքերը, թե ինչպես պետք է հաշվարկվի պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ ժամկետը, եթե պատժի կրման ընթացքում դատապարտյալի կողմից նոր հանցանք է կատարվել:

Ծանոթացեք օրենսդրական փոփոխություններին

ՀՀ նոր քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ «... դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում նոր հանցանք կատարելու դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու՝ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետի ընթացքն ընդհատվում է: Այս դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ժամկետի հաշվարկն սկսվում է նորից՝ դատապարտյալի կողմից հիմնական պատժի կրումն սկսելու պահից...»:

ՀՀ գործող քրեական օրենսգիրքը սահմանում է, որ անչափահասներին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հիմքերը նույնն են, ինչ որ հանցավոր վարքագիծ դրսևորած չափահաս հանցավորների համար: Մասնավորապես, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն անչափահասին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննելիս՝ «հաշվի են առնվում քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին, 1.1-ին և 1.2-րդ մասերով սահմանված պահանջներն ու հանգամանքներն այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են անչափահաս դատապարտյալների նկատմամբ»:

Նշված դրույթի մեկնաբանությունից հետևում է, որ անչափահասը դատարանի կողմից կարող է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցների քննարկման արդյունքում հանգում է հետևության, որ ուղղվելու համար դատապարտյալը նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի, քանի որ՝

- 1 պատժի կրման ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ, և
- 2 դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է:

Անչափահաս դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի են առնվում պատժի կրման ընթացքում խրախուսանքի կամ կարգապահական տույժի առկայությունը, պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, եթե առկա է եղել նման հնարավորություն, պատժի կրման ընթացքում առնվազն երեք ամիս աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն և այլն:

Դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում՝ հանցագործության բնույթը և հանրային վտանգավորությունը, դատապարտյալի՝ հանցագործություն կատարելու պահին տարիքը, իր կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները, մասնակցությունը վերասոցիալականացման, այդ թվում՝ անձնական զարգացման միջոցառումներին, ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը, սոցիալական միջավայրը, առողջական, այդ թվում՝ հոգեկան առողջության վիճակը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և հարկադիր բուժման արդյունքը և այլն:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անչափահասների վրա տարածվում են նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները՝ պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին:

Թեև պատժից պայմանական վաղաժամկետ ազատելիս պատժի չկրած մասը գործող քրեական օրենսդրությամբ դիտարկվում է որպես փորձաշրջան և դատարանի կողմից սահմանվում են դատապարտյալի նկատմամբ կիրառվող պարտականություններ, սակայն ներկայումս դրանք բավարար չեն հասարակությունում անչափահասի վերաինտեգրումն ապահովելու համար: Մասնավորապես, գործող քրեական օրենսգրքի համաձայն, դատապարտյալի վրա կարող է պարտականություն դրվել՝ չփոխել մշտական բնակության վայրը, բուժման կուրս անցնել ակոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից: Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ կամ փոխարինել դրանք: Հատկապես վերջին ձևակերպումը հստակեցման կարիք ունի, քանի որ անհասկանալի է, թե դատարանն ինչ պարտականություններ կարող է սահմանել:

Ծանոթացեք օրենսդրական նորամուծություններին:

2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքով այդ պարտականությունների շրջանակն առավել հստակեցվել է և սահմանվել, որ փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի վրա կարող են դրվել հետևյալ պարտականությունները՝

- 1 կրթական և մշակութային ծրագրերին մասնակցելը, այդ թվում՝ նոր արհեստ կամ մասնագիտություն ձեռք բերելը,
- 2 առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության Հայաստանի Հանրապետության տարածքը չլքելը,

- 3 քնակության վայրը փոխելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին սեղմ ժամկետում իր նոր քնակության վայրի հասցեն հայտնելը,
- 4 ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելը,
- 5 հանրօգուտ աշխատանքներում ներգրավվելը,
- 6 սեռավարակից կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունից բուժման կուրս անցնելը,
- 7 տուժողի, նրա ընտանիքի անդամի, նրա խնամքի տակ գտնվող անձի կամ դատարանի կողմից նշված այլ անձի հետ որևէ շփում ունենալու արգելքը,
- 8 որոշակի վայրեր այցելելու արգելքը,
- 9 հոգեբանական-վերականգնողական կուրս անցնելը:

Նոր քրեական օրենսգիրքը նաև սահմանել է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման պարագայում փորձաշրջանի ընթացքում սահմանված պահանջների խախտման իրավական հետևանքները, մասնավորապես սահմանվում է, որ՝

«Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում խուսափում է դատարանի սահմանած պարտականությունները կատարելուց, վերահսկողությունից կամ դատարանի նշանակած անվտանգության միջոցը կամ լրացուցիչ պատիժը կատարելուց, ապա համակողմանի գնահատման ենթարկելով խուսափելու պատճառները՝ դատարանը վերացնում է անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կամ դատապարտյալի միջնորդությամբ մինչև 1 տարի ժամկետով երկարաձգում է անձի նկատմամբ նշա-

Ըստ Ձեզ՝ դատարանի կողմից սահմանված պարտականությունները չկատարելն ի՞նչ հետևանքներ է առաջացնում:

նակված փորձաշրջանի ժամկետը, այդ թվում՝ առավելագույն՝ 5 տարի ժամկետով նշանակված փորձաշրջանի ժամկետը:

Եթե փորձաշրջանի ժամկետը երկարաձգելուց հետո անձը շարունակում է խուսափել դատարանի սահմանած պարտականությունները կատարելուց, վերահսկողությունից կամ դատարանի նշանակված անվտանգության միջոցը կամ լրացուցիչ պատիժը կատարելուց, ապա դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը:

Եթե հանցագործությունների համակցությամբ նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, որը պայմանականորեն չի կիրառվել, և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ, ապա դրա կատարումից խուսափելու դեպքում դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը վերացնում է:

Եթե փորձաշրջանի ընթացքում անձը կատարում է նոր դիտավորյալ հանցանք, ապա նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշումը վերացվում է: Այդ դեպքում դատարանն անձի նկատմամբ պատիժ է նշանակում դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու սահմանված կարգով:

Եթե փորձաշրջանի ընթացքում անձը կատարում է անզգույշ հանցանք, ապա պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը լուծում է դատարանը: Եթե դատարանը գործի հանգամանքների համակողմանի գնահատման արդյունքով որոշում է չվերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը և նոր կատարված հանցանքի համար նշանակում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, ապա այդ պատիժը պայմանականորեն չի կիրառվում, և փորձաշրջանի ժամկետը երկարաձգվում է մինչև 5 տարի ժամկետով: Եթե փորձաշրջանի ընթացքում անձը կատարում է մեկից ավելի անզգույշ հանցանք, ապա պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը վերացվում է: Եթե դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը, ապա

պատիժ է նշանակում դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու սահմանված կարգով:

Եթե անձը կատարել է նոր հանցանք մինչև պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումն ուժի մեջ մտնելը, ապա դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը և պատիժ է նշանակում դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու կանոններով:

ՀՀ գործող քրեական օրենսգրքով՝ անչափահասներին պատժից ազատելու առանձնահատուկ հիմք նախատեսված է 93-րդ հոդվածում, որը ենթադրում է անչափահասին պատժից ազատելը հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով:

Համաձայն նշված հոդվածի՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը կարող է պատժից ազատվել, եթե դատարանը գտնի, որ պատժի նպատակներին կարելի է հասնել նրան անչափահասների հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով: Ընդ որում, հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելը նշանակվում է առավելագույնը երեք տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան չափահաս դառնալը:


Օրենսդրի կողմից նաև նախատեսվում է, որ հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում գտնվելը կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե դատարանն ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատության ղեկավարի միջնորդությամբ գտնի, որ անչափահասը տվյալ միջոցը հետագա կրելու կարիքը չունի:

Սակայն գործնականում պատժից ազատելու այս հիմքը փաստացի չի կիրառվում, քանի որ հասկանալի չէ, թե ներկայումս դատարաններն անչափահասներին որ հաստատություններ կարող են ուղարկել պատժից ազատելու այս հիմքը կիրառելու նպատակով: Դա հաշվի առնելով էլ՝ 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում պատժից ազատման այս հիմքն ընդհանրապես նախատեսված չէ: Փոխարենը՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածը նախատեսում է անչափահասին պատժից ազատելը՝ վերականգնողական հաստատությամբ:

յունում տեղավորելու միջոցով: Մասնավորապես՝ նշված հոդվածով սահմանվում է, որ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելով՝ դատարանը նրան ազատում է պատժից, եթե հիմնավորում է, որ պատժի նպատակներին կարելի է հասնել նրան վերականգնողական հաստատությունում տեղավորելով: Վերականգնողական հաստատությունում տեղավորելը նշանակվում է առավելագույնը 3 տարի ժամկետով:

Վերականգնողական հաստատությունում գտնվելը կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե դատարանը համարի, որ անձը տվյալ միջոցը հետագա կրելու կարիքը չունի: Վերականգնողական հաստատությունում տեղավորելու ձևով հարկադրանքի միջոցից խուսափելու դեպքում այդ հարկադրանքի միջոցը փոխարինվում է դատավճռով նշանակված պատժով:

Այնուհանդերձ, ՀՀ նոր քրեական օրենսգրքի հիշյալ կարգավորման իրականացումը ևս դեռևս իրատեսական չէ, քանի որ ՀՀ-ում նախատեսված չեն այնպիսի վերականգնողական հաստատություններ, որտեղ կարող է ապահովվել ՀՀ նոր քրեական օրենսգրքի քննարկվող դրույթի պահանջի ի կատար ածումը:



- 1 ՀՀ գործող քրեական օրենսգիրք (ընդունված 18.04.2003, ուժի մեջ է մտել 01.08.2003),
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155365>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 2 ՀՀ նոր քրեական օրենսգիրք (ընդունված 05.05.2021, ուժի մեջ է մտնելու 01.07.2022),
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 3 Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու համար ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Պեկինյան կանոններ) (ընդունված 29.11.1985),
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18505>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

ԲԱՌԱՐԱՆ



Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ — Պետական հարկադրանքով ապահովված քրեաիրավական ներգործության միջոց է, որը դատարանի դատավճռով կամ որոշմամբ պետության անունից նշանակվում է պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ — Ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմին է դիտարկվում ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայությունը՝ իր ենթակայությամբ գործող քրեակատարողական հիմնարկների միջոցով, իսկ ազատագրված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին է հանդիսանում ՀՀ Պրոքուրատուրայի ծառայությունը:

ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ — ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններն անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ, որոնք ընդունվել են ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1985թ.-ի նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով: